

անկից աւելի բան կ'ուտուի մի, չէ թէ միայն իրիկուան ընթրիք, հապա կէս օրուան ճաշ ընելու համար ալ գրեթէ :

Պնակները անանկ փայլուն ու հացով մաքրած կ'ելեն առջևէն, որ լուալու կարօտութիւն չմընար : Թէ որ համարձակիս ու ըսես իրեն՝ Պարոն կ'երենայ թէ հրամանքդ Նարոպա քալած, ու առանց որկրամոլութեան՝ շատ ուտելու արուեստը աղէկ սորվեր ես, պատասխան կուտայ . Իրաւ է, բժիշկներէն ալ լսեր եմ որ մարդուս ստամոքսը առաձգական է, քիչով ալ կը լեցուի, շատին ալ տեղիք կուտայ . բայց ես քիչ անգամ երկրորդին փորձը ըրեր եմ, որովհետև բարեկամներու քով կերակուրի քիչ կ'երթամ :

Ընուշեղէնները սեղան կուգան . Քիչ մը անուշը կերակրոյ վրայ մարսեցուցիչ է ըսելով, աղէկ մը անոնց կողն ալ կը մտնէ : () ղի կամ ամպերէ կը հրամցընեն . գաւաթը ձեռքը բռնած՝ պուտիկ մը բերանը կ'առնէ, բերնին չորս դին կը պտըտցընէ, ամէն մէկ ահուային քովէն կ'անցընէ, վեր կը տանի վար կը բերէ, կըլլեմ մի չկըլլեմ մի, վերջապէս կ'որոշէ կըլլելու . բայց կըլլէն ետքը՝ կարծես թէ կը զզջայ որ դեռ աղէկ մը համը կրնար առնուլ : Եւ ոճով ինչուան որ գաւաթին տակը հասնի նէ, յայտնի կ'երեցընէ՝ որ Նարոպա քալած, և ուտելու խմելու արուեստը աղէկ սորվեր է, մանաւանդ երբոր տանուտէրը հաշիւ չպիտոր ցուցընէ :

Ինչ տարբերութիւն ուրիշ սեղանակիցներէն, որ իրենց կարևոր սնունդը առնելու համար՝ սեղան նստեր են . ինչ մեղադրելի բան կ'երենայ անոնց աչքին՝ ասանկ կերուխումի սէրը : Իսկ ինքը ուռած կարմրցած՝ կը սկսի կերակուրներու ու պատառաբոյծներու վրայ պատմութիւններ պատմել . աշխրբիս մէջ ինչ ուտողներ կան . ճրի ճաշը ինչ համով բան է, գրեթէ գլխաւոր համեմն է կերա-

կուրի . և թէ ինքը ինչպէս չէ վարժած շատ ու ճրի ուտելու, բայց բարեկամներու հրակերքը չմերժելու համար՝ անոնց սեղանը կ'երթայ, ու տանտիրոջը պատիւ ընելու համար՝ կերակուրներուն համը կը նայի : Արջապէս ինքը ինքը սակաւապէտ ու կերուխումի հոգ չունեցող մարդկանց կարգը դնելով, աղէկ քարոզ մըն ալ կուտայ՝ որկրամոլութեան ինչ գէշ բան ըլլալը ցուցընելու համար :

Եւ քեզի սովորական որկրամոլներուն նկարագիրը . բայց մեղադրելի ու ծիծաղելի ըլլալու համար՝ հարկ չէ որ աս նկարագրիս ամէն մէկ մասը գտնուի վրագ, մէկ երկուքն ալ հերիք է :

*

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ .

Համայնաւարժ դպրոցին Բարեկարգութեան Ռեզոյները :

ՀԱՄԱՅՆԱՎԱՐԺ դպրոցը որպէս զի կարենայ բարեկարգութեամբ առաջ երթալ, պէտք է որ մէջը ըլլան անվերակացուներ, ու գրասեղանի զըլխաւորներ . ք, ցուցակներ . ք, ուսման ատեններուն բաժանմունք . ք, հրամաններ . ք, մրցանակ ու պատիժ . ք, քննութիւն :

Ա . Սերահայրներ : — Համայնաւարժ դպրոցի մը մէջ անկարելի է որ վարպետը մինակ կարենայ թէ բան սորվեցընել տղոց և թէ զանոնք կարգի կանոնի մէջ պահել . ուստի պէտք է որ աշկերտներուն մէջ ամենէն ընտիրներէն վեց հոգի ընտրէ Սերահայր անունով, և ասոնց ամէն մէկը մէյմէկ օր կատարէ իրեն պաշտօնը :

Եւ վերակացուն կը նստի վարպետին մօտ առանձին գրասեղանով, կամ թէ վարպետին գրասեղանին մէկ ծայրը . ինքը հրաման կուտայ տղոց ջուր խմելու կամ հարկաւորութեան եր-

Թալու, գրասեղանի գլխաւորներուն վրայ ալ մասնաւոր արթնութիւն կ'ընէ, ու կը դիտէ թէ անոնք իրենց պաշտօնը լաւ կատարեն: Արբոր վարպետը տեղ մը երթայ, ինքը քիչ ատենի համար անոր տեղը կը բռնէ:

Բ. Գրասեղանի գլխաւորները: — Արպետը պէտք է ընտրէ ամէն դասէ կամ միայն վերի դասէն մէյմէկ գլխաւոր: Այ գլխաւորին պարտքը պիտի ըլլայ իր գրասեղանը նստած տղոց վրայ աչք ունենալ, ան տղաքոր կը խօսին կամ հանդարտ չեն կենար՝ անուննին նշանել. բայց պէտք չէ ամենեւին ձայն հանէ, որպէս զի շիթութութիւն չծագի: Ինչ որ աս գլխաւորներէն մէկը պահսի, վարպետը մէկէն պէտք է ուրիշ մը դնէ անոր տեղը:

Գ. Յուշահիշեր: — Յուշակները խիստ հարկաւոր են դպրոցին լաւ կառավարութեանը համար, և ասոնք կրնան տպուած ըլլալ. բայց թէ որ վարպետը չուզէ աս ծախքս ընել, կրնայ ձեռքով ալ գծել, ինչպէս որ օրինակով հոս կը ցուցնենք: Յուշակները պէտք է վարպետը բռնէ, ու անոնց վրայ տառերն ու թուանշանները որոշ գրէ:

Իրեք ցուցակ բաւական է. ա, տըղոց ցանկը. բ, դպրոցին ելումնուտքը. գ, թղթակցութիւնները: Աշակերտաց ցուցակը տես դիմացի սեանը մէջ:

Այ ցուցակիս նայելով՝ Քաբգենեանը 12 տարեկան է, 1845^{ին} սեպտ. 9^{ին} դպրոց եկեր է. հօրը արհեստն է դերձակութիւն, կը բնակի Ալալթիա. ընթերցմունքի երկրորդ դասին մէջ գրուեր է: $\frac{1}{9}$ կտորակը երկու բան կը ցուցնէ. 15 թիւը թէ ամսուն 15^{ին} մտեր է ան դասը. իսկ 9 թիւը կը ցուցնէ թէ տարւոյն իններորդ ամիսը. ըսել է թէ սեպտեմբերի 15^{ին} սկսեր է. նոյն ամսուն նոյն օրը մտեր է գրութեան երրորդ դասը. իսկ $\frac{2}{10}$ կտորակը կը ցուցնէ թէ հոկտեմբերի 20^{ին} մտեր է ուրուագրութեան առաջին դասը, նոյնպէս $\frac{2}{11}$ կտորակը կը ցուցնէ թէ նոյեմբերի 2^{ին} եր-

Յ Ո Ւ Յ Ա Կ Ա Շ Ա Կ Ե Ր Տ Ա Յ

ԳՆՏՈՂՈՒ ՔԻՆՆԵՐ	Բարեկրթ. ֆուլթալան. Մարգար. Թեթև.
ՏՂՈՒՆ ԳՎՐՈՅԷՆ ԵՂԵՂԸ	Յ ՅՈՒՆ 1846
ԳՔԻՆԱԿԱ ՆՈՒԹԻՆ	13 9
ԵՐԿՐԱՇԱԳ.	2 11
ՈՒՐՈՒՆԳՐ.	20 10
ՔՈՒՐԱՐԱՆ.	13 9
ԳԻՐ	13 9
ԸՆԹԵՐ. ՑՈՒՄՆ	15 9
ԲՆԱԿՈՒ. ՔԻՆՆԵՐ	Ղայա- թիա
ՆՆՈՂԱՑ ԵՐԷՆՍԸ	Դերձակ
ՏԱՐԻՔ	12
ՏՂՈՑ ԱՆՈՒՆԸ	Պօղոս Բարգե- շեան
ԴՊՈՑ ՄՏՆԵՆՈՒՆ ԱՏՆՆԸ	1845 Սեպտ. 9

կրաչափութեան առաջին դասը մտեր է, ու սեպտ. 15^{ին} քերականութեան առաջին դասը:

ՅՈՒՑԱԿ ԵԼԻ ԵՒ ՄՏԻ

ԱՆՈՒՍՆՔ ԱՇԱԿԵՐՏԱՑ	ՄԱՆՐ ԾԱԽՔ	ԱՄՍԱԿԱՆ ՎԱՐՁ	ՊԱՐՏՔ	ԱՌՔ	ՄՆԱՑՈՐԴՔ ՊԱՐՏՈՒՑ	ՏԵՂԵԿՈՒ ՔՒՒՆՔ Ի ՎԵՐԱՑ ՄԱՆՐ ԾԱԽՈՒՑ
Պեարոս Պողոս .	38 փող .	14 դահ .			2 դահ .	Վասն կազմի տեստակաց երկուց .

Ըս ելուժուտքի ցուցակը աւելի | Ներու մէջ ալ այլևայլ ծախքեր կ'ը-
 Հարկաւոր է առանձնական դպրոց- | լան , որ զգուշութեամբ նշանելը ա-
 ներու մէջ . բայց Հասարակաց դպրոց- | ղէկ է :

ՅՈՒՑԱԿ ԹՂԹԱԿՑՈՒԹԵԱՆ

ԹՈՒՍԿԱՆ	ԻՄԱՍՑ ԹՂԹՈՑ	ՕՐԻՆԱԿՔ ԹՂԹՈՑ
Յունվ. 4	Թուղթ Պարոն Պողոսի վասն որ- դւոյ իւրոյ ԱՆ- դրէի .	Ի վերջնում նը- ւագի տեսանելոյ մերոյ զմիմեանս և այլն :
Մայ. 15	Պինի թղթոյ Պարոն Պողոսի .	Փութամ'ի պա- տասխանի թղթոյ ձերոյ և այլն :
Մայ. 17	Թուղթ Վրթա- նեսի վարդապե- տի յաղագս . . .	Յաւէ ինձ յոյժ և այլն :
Յունիս 5	Պատասխանի .	Մտադիր սի- րով ընկալեալ են :

Ըս թղթակցութեան ցուցակը շատ
 Հարկաւոր ու օգտակար բան է , վասն
 զի մէկ նայուածքով կրնայ մարդ ի-
 մանալ դպրոցին վրայ եղած թղթա-
 կցութիւնները , և թէ վարպետները
 ինչ վերաբերութիւն ունին ուրիշ
 դպրոցներու վարժապետներուն հետ :
 Թղթերուն օրինակները կրնան զատ
 տեստակի մը մէջ գրուիլ , սս ցուցա-

կին մէջ անոնց սկզբնաւորութիւննե-
 ըր միայն նշանելով , ինչպէս որ դրեր
 ենք :
 Ըս ցուցակներէն զատ պէտք է ու-
 նենայ վարպետը ուրիշ տեստակ մը ,
 և հոն ամէն իրիկուն նշանէ թէ տղոց-
 մէ որը եկեր է՝ որը չէ եկեր . և սս է
 տեստակին ձևը :

ԱՌՒՍՈՑ		ՅՈՒՆԻՍԿՈՍ	
ԳՈՒՄԱՐ	ՉԵԿԵՆԿ	ԳՈՒՄԱՐ	ՉԵԿԵՆԿ
10	1	10	1
19	4	19	4
19	19	19	19
10	1	10	1
19	4	19	4
19	19	19	19
10	1	10	1
19	4	19	4
19	19	19	19
77	6	77	6
71	1	71	1

Ըստ տետրակին վրայ պէտք է դնել տարին ու ամիսը : Երբ որ տղայ մը առաւօտը եկեր է, պէտք է աս գիծը (—) քաշել իրիկունան համար աս շիտակ գիծը (|) : Թէ որ տղայ մը առաւօտն ու իրիկունն ալ գայ նէ, անունին քովը կը դրուի աս նշանս (+) : Իսկ թէ որ տղայ մը ամբողջ օրը չգայ, ան ատեն զոյ կը դրուի : Ըստ աղիւսակը անոր համար է որ մէկ նայուած քով մէկէն իմացուի թէ տղայ մը քանի անգամ չէ եկեր :

Ալ կ'ըլլայ որ դպրոցին մէջ օտարականաց համար ալ տետրակ մը ըլլայ, ու երևելի մարդիկ երբ որ դպրոցը կուգան տեսնելու՝ անուննին գրեն մէջը : Նաև դիտողութի մը որ դպրոցին մէջ ընեն՝ ան ալ կ'ուզեն նէ գրեն : աս բանս վարպետին աղաչելովը պիտի ըլլայ :

Հ . Մ . Ս

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ուկրանիայի վրայ ընդհանուր որդէկոմիտէն .
— Երբ Օգոստոս :

ԸՍՒԱՅԻ Հարաւային կողմը ընդարձակ ովկիանոսին մէջ ինչուան 4000 փարսախ երկայնութեամբ տեղ անթիւ կղզիներ իրարու քով գալով՝ աշխարհքիս մէկ մեծ մասը կը ձևացունեն, ու ամէնը մէկտեղ Եւրոպայէն աւելի մեծ կ'ըլլան, ուստի կ'ըսուին բոլորը մէկէն Ուկրանիա կամ Նովային աշխարհ, Ովկիանոս ծովուն անունէն աննելով :

Ովկիանիան արևելեան երկայնութեան 91^{ին} ու արևմտեան երկայնութեան 105^{ին} տակը կ'իյնայ, և ասով յայտնի կ'ըլլայ որ մէկ կողմէն Հընդկաց ծովն ու մէկալ կողմէն Չինաց ծովը կը պատեն : Ըստ աշխարհքը գըլխաւոր իրեք մաս կը բաժնուի . առաջինը՝ այսինքն ամենէն պզտիկը՝ Ըսիայի ամենէն մեծ արշիպելագոսն է, և ասոր գլխաւոր կղզիներն են Սոնտ, Սոլուքեան կղզիները, Փիլիպպեան կղզիները, Պորնէոյ, Ղաւա, Սումատրա և ուրիշ քանի մը կղզիներ . աս մասը կ'ըսուի Սալեզիա կամ Սալայաստան, և կամ Երևմտեան Ովկիանիա : Երկրորդը կ'ըսուի Ըստրալիա, որուն մէջն է Երբ Հոլանտա, Երբ Օգոստոս, Երբ Բրիտանիա, Երբ Կուինէա, Սողոմոնի կղզիները, Հոգլոյն սրբոյ կղզիները, և Տեմենի կղզիները : Երրորդը կ'ըսուի Երևելեան Ովկիանիա և կամ Փոլինէզիա, ասոր մէջն են բոլոր Ըստրալիային ու Սալեզիային արևելեան կղզիները, ինչպէս են Բարեկամաց կղզիք, Ըսազակաց կղզիք, Եւրոպաց կղզիք, Բնկերութեան կղզիք, Սարբիզեան կղզիք և ուրիշ կղզիներ :